ՎԱՆԻ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910 – 1915 ԹԹ.)

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Վ.

1910-1915 թթ. Վանում լույս է տեսել «Աշխատանք» գրական, քաղաքական և տնտեսական շաբաթաթերթը: Խմբագիրը ՀՅԴ անվանի դեմքերից մեկն էր՝ Իշխան Միքայելյանը: Թեև շաբաթաթերթը ՀՅԴ պարբերական մամուլի տեղական օրգանն էր, բայց չուներ խիստ ընդգծված կուսակցական դիմագիծ: Այն ոչ թե ՀՅԴ պաշտոնաթերթն էր, այլ՝ կուսակցական հրատարակություն, որը լուսա- բանում էր Վանի վիլայեթի հիմնախնդիրները, ներքին կյանքն ու առօրյան, նաև փորձում էր համախմբել ընթերցողներին՝ հանուն հայապահպանության և ազգային նպատակների իրականացման: Սկզբնական շրջանում, ինչպես բնորոշ էր այդ ժամանակաշրջանում Թուրքիայում հրատարակվող հայկական թերթերին ու ամսագրերին, «Աշխատանքը» տարված էր համընդհանուր բարեփոխումների և արևմտահայերի իրավահավասարության հովերով: 1913 թվականից սկսած՝ շաբաթաթերթի խմբագրակազմն արդեն այն կարծիքին էր, որ երիտթուրքական կառավարությունը շարունակում է Աբդուլ Համիդի հայասպան ու հակահայկական քաղաքականությունը: «Աշխատանքը» տեղական խնդիրներ վերհանող պարբերականից աստիճանաբար վերածվում է համահայկական մտահոգություններով ապրող և շնչող պարբերականի: Այն քաղաքականապես հասունացել էր և այլևս չէր վստահում թուրքական իշխանությունների երկդիմի քաղաքականությանը հայերի հանդեպ: Հրատարակության վերջին ամիսներին «Աշխատանքը» դառնում է 1915 թ. Վանում տեղի ունեցած պատմաքաղաքական դեպքերի վավերագիր փաստաթուղթ: Շաբաթաթերթի էջերում «Օրը օրին» խորագրի ներքո արձանագրված են Վանի հերոսական ինքնապաշտպանության, վանեցիների հաղթանակի դրվագները, նաև խոսվում է քաղաքի ինքնավարության, վերջին օրերի իրադարձությունների մասին:

«Աշխատանքը» պաշտպանում էր ազգերի իրավահավասարության սկզբունքը, որը հատկապես 1908-1909 թթ. տարփողվում էր Թուրքիայում: Յուրաքանչյուր ազգ Թուրքիայում ուներ ազգային դիմագիծը պահպանելու սահմանադրական իրավունք, որն այդպես էլ մնում էր միայն թղթի վրա: «Մեր նպատակը» խմբագրականում շաբաթաթերթը գրում է, որ կողմնակից է «լայն ազգայնական իրաւունքի տեսակէտին», բայց միանգամայն հակառակ է «նեղ ազգայնական ու կրօնական ձգտումներին, որոնք կը հասնին շօվէնութեան: Թերթը հնարավորութեան ոյժերի ու պայմանների թոյլա- տրրութեան չափով պիտի արձագանք տար հասարակական բոլոր խնդիրներին՝ միշտ առաջադիմական, լայն-ազատական տեսակէտից առաջնորդուելով»[1]: «Աշխատանքը», սակայն, հավակնոտ չէր և համոզված էր, որ չի կարող նպաստել իր հրապարակումներում, հոդվածներում ու վերլուծականներում բարձրացված

[1] *Աշխատանք, Վան, 1910, N 1, էջ 6:*

խնդիրների լիարժեք լուծմանը, քանի որ «գավառական թերթից այդքան պահանջելն աւելորդ էր»: Շաբաթաթերթը համոզված էր, որ անկախ ամեն ինչից՝ ամեն պարագայում հավատարիմ էր մնալու դավանած սկզբունքներին՝ «հաւատալով, որ պետական, հասարակական կազմւածքի, նոր մտածողութեան մէջ կաւելացնի մի հաստատուն անկիւնաքար»[2]: 1910 թ. գրում էր, որ, իբրև գավառական պարբերական, ինքն անկարող է խորությամբ ներկայացնել Բալկանյան կնճիռն ու Հայկական հարցի զարգացումները, բայց նաև ինչ-որ չափով պաշտպանում էր բալկանյան ժողովուրդների անկախացման ձգտումների նկատմամբ թուրքական պետության մոտեցումը: Այսինքն՝ զգուշավոր քաղաքականություն էր որդեգրել Հայկական հարցի լուսաբանման առումով: «Վերջին ժամանակներս Բալկաններից ապստամբութիւնների լուրեր ենք ստանում: 100 տարուց ավել է այդ ճզմւած ու հարստահարւած ազգերն ու ժողովուրդները զէնքի ու ապստամբութեան միջոցին են դիմում, յանուն իրենց խլւած ու բռնաբարւած իրաւունքի... Եւ այդ բոլորը մի այնպիսի ժամանակ, երբ մենք կարօտ ենք խաղաղութեան, նւիրւելու ստեղծագործիչ աշխատանքի և շինիչ գործի»,- գրում էր «Բալկանյան կնճիռներ» հոդվածի հեղինակը՝ Անցորդը[3]: Երիտթուրքական հեղաշրջումից հետո այդ օրերին հատուկ հասարակական-քաղաքական իրադրության յուրօրինակ ընկալմամբ էր պայմանավորված հոդվածագրի հավատն ազգային հարցի լուծման նկատմամբ՝ համաթուրքական բարեփոխումների շրջանակում. «Կամաց-կամաց կը վերանան այդ ցնցող ու Թուրքիայի նօրմալ զարգացմանը խոչընդոտ հանդիսացող երեւոյթները, եթէ առաջնորդուեն միայն Օսմանեան հայրենիքի եւ նրա բաղկացուցիչ մասնիկների առաջդիմութեան, վերջնական երջանկացման տէսակէ-տից»[4]: Այս մոտեցումն ընկած էր «Աշխատանքի» քաղաքական վերլուծությունների և ներքին ու արտաքին տեսությունների հիմքում: Այն բխում էր ՀՅԴ մարտավարությունից և Արևմտյան Հայաստա-նի համար կուսակցության որդեգրած ծրագրային դիրքորո-շումից: Մինչև արևմտահայերի զանգվածային ջարդերը «Աշխատանքը» շարունակում էր չդավաճանել կուսակցական պատգամներին և դրանով թելադրվող սեփական տեսակետներին:

Սկսած 1913 թվականից, երբ երիտթուրքական կառավարությունն ավելի պարզորոշ էր ցուցադրում իր հավատարմությունը նախկին վարչակարգերի վարած քաղաքականությանը՝ մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ, «Աշխատանքն» ավելի հաճախ է սկսում հանդես գալ քննադատական հոդվածներով՝ ի շահ և ի պաշտպանություն սպանվող, թալանվող, հողազուրկ դարձող իր ազգակիցների: Շաբաթաթերթը վրդովվում էր խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական աշխատանքներում պետական այն քաղաքականությունից, որն ընտրական օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով, արևմտահայերին թույլ չէր տալիս իրենց թվի համեմատ պատգամավորներ ունենալ: «Աշխատանքը» գրում էր, որ Թուրքիայի նահանգային նոր օրենքը բացառում էր ազգային փոք-

---

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, N 3, էջ 14:*

[4] *Նույն տեղում, էջ 15:*

բամասնությունների քաղաքացիական իրավունքները. «Օսմանացի անորոշ յորջորջումը կը փոխարինէ ազգութեանց կոչումին: Իրաւանց ընդարձակում իբրեւ «չարագուշակ» հասկացողութիւն աղճատուած է, և փոխանակ տեղական ընտրովի մարմինները իրաւանց այդ ընդարձակումէն օգտուելու, ընդհակառակ, ամեն բան վերապահուած է նշանակովի պաշտօնեաներուն»[5]: Մի շարք հոդվածներում պարզաբանվում էր, թե ինչո՞ւ Վանի հայ ընտրազանգվածը չէր մասնակցել Վանի վիլայեթի նահանգային ժողովի անդամների ընտրությանը: Հիմնական պատճառն այն էր, որ Թուրքիայի նահանգային նոր օրենքը դեմ էր հատկապես հայ ժողովրդի շահերին: Բացի այդ, շաբաթաթերթը նշում էր, որ թեև Թուրքիայի ազգային փոքրամասնությունները պայքարում էին իրենց ազգային դիմագծի պահպանման համար, բայց նրանց ցանկանում էին դարձնել մեկ «ազգություն»՝ օսմանացի[6]: 1913 թ. խորհրդարանական նոր ընտրությունների առիթով Պատրիարքարանը հայ քաղաքական կուսակցությունների, խմբակցությունների և հարանվանությունների ներկայացուցիչների հետ կառավարությանն էր դիմել թագրիրով, որով պահանջում էր ապահովել հայերի համար համեմատական և ազգային ընտրությունների իրավունք: Այդ խնդրանքը մերժվում է: «Կառավարութեան ընթացքը նախատինք մըն է՝ ուղղուած ամբողջ հայ Ազգի հասցէին և անոր արդար ու յառաջադէմ պահանջներուն... Հայ Ազգը հաստատապէս որոշած է ապրիլ և չնահանջել իր պահանջներէն՝ ոչ մերժումներու և ոչ ալ ջարդի ու կոտորածի սարսափներուն առջեւ եւ ապրիլ ուրիշներու հետ հաւասար իրաւունքներով և հաւասար պարտականութիւններով: Անոր պահանջներէն եւ ոչ մէկը հակառակ եղած է օսմանեան պետութեան շահերուն և կամ դպած է սահմանադրութեան սկզբունքներուն: Ընդհակառակը, անոնք բոլորն ալ ուղղուած են դէպի մէկ նպատակ, այն է՝ հայ Ազգի բարգաւաճումը օսմանեան բարգաւաճ Հայրենիքի մէջ»[7]: Անդրադառնալով այս դեպքերին՝ շաբաթաթերթը կարծում էր, որ Թուրքիայում անհրաժեշտ էր ազգային համերաշխություն[8]: «Աշխատանքը» ներկայացնում էր այդ համերաշխությանը խանգարող երկու հիմնական պատճառ. «Թուրքերը կը մեղադրէին Հայերը, թէ ասոնք քաղաքական անջատման նպատակ ունին, և դեռ աւելին ալ՝ թէ կը ձգտեն օտար տիրապետութեան մը ենթարկելու Հայաստանն ու իր սահմանակից գաւառները, հայերը տակաւին հզօրապէս կամբաստանեն Թուրքերը, թէ ասոնք պարզապէս ջնջել կուզեն Հայ ցեղը Փոքր Ասիայէն, միակրօն և ապա տակաւ միատարր պետութիւն մը ձուլելու համար ոչ-հայ տարրերէն»[9]:

«Աշխատանքը» գրում էր, որ հայ ժողովուրդը ցանկանում էր իր «բնակած հայրենիքին մէջ քաղաքական ազատ կարգեր ստեղծել, ո՛նէ պայմանով

---

[5] Նույն տեղում, 1913, N 30, էջ 1:
[6] Նույն տեղում, N 29, էջ 1-2:
[7] Նույն տեղում, N 5, էջ 1:
[8] Նույն տեղում, N 4, էջ 1:
[9] Նույն տեղում, N 33, էջ 1:

չկաշկանդուած անկախ զգացում մը իրենց ազգային մշակոյթին և տնտեսական կեանքին»[10]:

1913-1914 թթ. «Աշխատանքը» քննարկման առանձին նյութ էր դարձրել հայկական վեց նահանգների հանդեպ եվրոպական վերահսկողության հաստատման հարցը: Վերլուծում էր Հայկական հարցին առնչվող բոլոր իրադարձությունները՝ ներկայացնելով Թուրքիայում այդ կապակցությամբ ծավալված քննարկումներն ու հայ և թուրք հասարակությանը մտահոգող խնդիրները: Այդ ամենի շնորհիվ «Աշխատանքն» այն տեսակետն էր առաջ քաշում, որ Թուրքիան մերժողական ու խիստ լեզու «կը բանեցնէ Եւրոպայի առաջարկած ծրագիրի ու քննթրոլի սկզբունքին դէմ: Օսմանեան կառավարութիւնը որոշած է բացարձակապէս մերժել ոնէ ծրագիր կամ առաջարկ, որ կը ձգտի իրական քննթրոլ հաստատել իր բարենորոգչական գործառնութեանց վրայ և դպչիլ իր անկախութեան»[11]:

Հայերի վստահությունը թուրքական պետության նկատմամբ կվերականգնվեր, եթե կամ Եվրոպայի վերահսկողությունն հաստատվեր Թուրքիայի նկատմամբ, կամ իրագործվեր փոխադարձ վերահսկողություն հայ ժողովրդի և թուրքական իշխանությունների կողմից: Սա էր «Աշխատանքի» մոտեցումը: Ազգային համերաշխության հասնելու նպատակով շաբաթաթերթը պահանջում էր հաշվի առնել մի շարք առաջարկներ, որոնց իրականացումը կբացառեր եվրոպական վերահսկողությունը թուրքերի վրա: Ներկայացնենք դրանք առանց փոփոխությունների. «Ահա քանի մը պահանջներ.

1. Ազգային համեմատական ներկայացուցչութիւն Խորհրդարանին և նահանգային ժողովներուն մէջ,

2. Հայ նահանգներու սահմաններու սրբագրում, զատելով անոնցմէ քրտաբնակ կէտերը կամ բուն Քիւրտիստանին վերաբերող գաւառները, որպէսզի իւրաքանչիւր ցեղ իր բարքերուն եւ իր քաղաքակրթութեան աստիճանի և պէտքերուն համեմատ կարենայ առաջդիմել՝ առանց խոչընդոտ եւ արգելք դառնալու իր դրացիին,

3. Հայ նահանգներուն մէջ հայ ժողովուրդի թիւին համաձայն հայ տարրին մասնակցումը կառավարական բոլոր ճիւղերուն-ժանտարմ, ոստիկանութիւն, զօրք, դատարան, պաշտօնէութիւն՝ անխտիր,

4. Հայաստանի զօրքը խաղաղ ժամանակ չպիտի հանի հայ գաւառներէն դուրս: Պատերազմի ատեն կամ ո՛նէ առթիւ հայ զինուորներու քանակը Հայաստան գտնուող զինուորական ուժերու հարիւրին 50-էն նւազ չպիտի լինի»[12]:

«Աշխատանքը» «Պետական կյանք» խորագրի ներքո հիմնադրման օրվանից մինչև վերջին համարները հանդես է եկել պետական կառավարման համակարգում

---

[10] Նույն տեղում:

[11] Նույն տեղում, N 4, էջ 2:

[12] Նույն տեղում, N 34, էջ 3:

եղած բացերի, թերությունների ու սխալների, որևէ հարցի կամ ազգի նկատմամբ դրսևորվող կանխակալ կամ ծրագրված անարդար քաղաքականության դեմ: «Խօսելով իթթիհատի (կամ ներկայ կառավարութեան) մասին, իբրեւ միակ անկեղծ սահմանադրական և հայրենասեր տարր թուրքերի մէջ, չենք կարող չը մատնանշել այն բոլոր ծրագրային պակասութիւնները, որոնց պատճառով այդ կուսակցութիւնը չը կարողացաւ լիովին կատարել իր պատմական միսիան»,- գրում էր Անցորդը «Բալկանյան կնճիռներ» հոդվածաշարի հինգերորդ հոդվածում[13]: Վերլուծականներին բնորոշ է այն, որ եզրահանգումներն արվում էին տեղային (Վանի և Վանի վիլայեթի) բնույթի խնդիրների ածանցմամբ, համադրմամբ և ընդհանրացմամբ: Վերոհիշյալ շարքի պատասխանատու Միրապոն թեև հոդվածներից մեկում անդրադառնում էր թուրքերի տեղական դատարանների գործունեությանը, բայց ընդհանրացնելով դրանցում առկա հիմնահարցերը՝ կառավարությունից պահանջում էր գտնել ընդհանրական լուծում: Նա փաստում էր, որ քայքայված տնտեսություն ունեցող Թուրքիայում և՛ նյութապես, և՛ բարոյապես միշտ տուժում էին ծայրագավառները. «Հոն կապրին ժողովուրդները՝ գրէթէ բաղդին թողուած, հոն ժողովուրդը ստրուկ է եւ ո՛չ ազատ քաղաքացի»[14]: Հոդվածագիրը հանդես էր գալիս դատարանների կայացրած անարդար վճիռների դեմ և կարծում էր, որ հարկավոր էր բարեխղճությամբ վարել դատական գործերը՝ առանց կրոնական, ազգային կամ այլ կարգի խտրականությունների: «Աշխատանքն» անգամ բաց նամակ է հղել Վանի վերաքննիչ ատյանի ընդհանուր դատախազ Խայրետինին, որտեղ քննադատել է նրա ղեկավարած հաստատության աշխատանքը և թվարկել հայերի հանդեպ եղած ապօրինությունները[15]: Բռնութեան շրջանի դատարանները շաբաթաթերթը բնորոշում էր մեկ բառով՝ կամայականություն, բայց «մի՞թէ այդ թոյնը այժմ էլ պէտք է թունաւորէ մեր պետական օրգանիզմը: Ու՞ր է չարիքի արմատը: Կամ գործ, կամ հրաժարական»,- այսպես էր ամփոփում իր վերլուծությունը Միրապոն[16]: Իսկ չարիքների արմատը կենտրոնական կառավարությունն էր. սա էր շաբաթաթերթի հիմնական եզրակացությունը: Եթե Թուրքիայի վիլայեթների պաշտոնատար անձինք (օրինակ՝ Վանի բոլոր կազաները, նահյաները, գայմագամները, մյուտուրները, ժանդարմները) չէին վայելում կառավարության վստահությունը, եթե նրանք «անկարող էին ու ապիկար, ինչո՞ւ համար կեդրոնական կառավարութիւնը չէ՛ր բռնում նրանց թևից, չէ՛ր շպրտում դուրս կառավարական օղակից, որպէսզի ո՛չ վարկաբեկեին կառավարութեանը, ո՛չ խաբեին իրանք իրանց և թէ ժողովուրդին»[17]: «Ավազակությունները» կոչվող խմբագրական-հոդվածներից մեկում բերվում էին նաև ասվածն ապացուցող թվային տվյալներ: Պարզվում է, որ 1910 թ. դրությամբ միայն

[13] Նույն տեղում,1911, N 7, էջ 15:
[14] Նույն տեղում, 1910, N 2, էջ 6:
[15] Նույն տեղում, N 5, էջ 9:
[16] Նույն տեղում, էջ 7:
[17] Նույն տեղում, N 3, էջ 3:

Վանի նահանգը ժանդարմներին պահելու համար հատկացնում էր 80.000 լիրա, բայց, միևնույն է, թե՛ այս վիլայեթում, թե՛ Թուրքիայում ընդհանրապես շարունակվում էին անօրինությունները: «Աշխատանքը» հարց էր ուղղում կառավարությանը. «Եթէ 80.000-անոց ժանտարմերիան անկարող է մի քանի տասնեակ աւազակները ոչնչացնելու, ապա ուրեմն ի՞նչն է արդարացնում նրանց գոյութիւնը»[18]: Շաբաթաթերթը նման գործելակերպը որակում էր որպես պետական ոճիր: Պարբերականի կարծիքով՝ իրա-վիճակից դուրս գալու ելքը ավազակների շահույթից իրենց բաժինն ունեցող և կաշառակեր պաշտոնյաների փոխարեն պետական մտածողության տեր մարդկանց պաշտոններ տալն էր: Իհարկե, սա խոցելի տեսակետ է, քանի որ որոշ չափով անտեսվում էր հայերի հանդեպ պետական գրեթե բոլոր կառույցների և օղակների կողմից իրագործվող հայահալած ծրագիրը: «Պետական կյանք» խորագրի մեկ այլ հրապարակման մեջ «Աշխատանքը» բերում էր պետական գանձարանի գումարների աննպատակահարմար իրացման փաստեր: Խոսքը մասնավորապես վերաբերում էր հանրօգուտ շինությունների կառուցման կամ վերանորոգման աշխատանքների համար պետությունից հատկացվող գումարներին: Կոնկրետ նշվում էր, թե պետական այս օղակի «յանցանքը աւելի մեծ էր», որովհետև Վանի վիլայեթում չէին բարեկարգվում ու վերանորոգվում ճանապարհները, կամուրջները և «վերջապէս Խառակոնիս ու Խորգոմ եւ ընդհանրապէս ծովափնեայ և լճափնեայ գիւղերը»[19]: Այդ բնակավայրերի բը-նակչությունն ստիպված լքում էր իր տուն ու տեղը: Պատճառների թվում թերթը նշում էր կամ «ջրարշաւէն ազատուելու» հանգամանքը, կամ անջրդի ու ջրագուրկ դարձած գյուղերում ապրուստի բացակայությունը, կամ գրում էր, թե «ծովը կը լափէ գիւղի արօտատեղիները, և անասունները կը մնան առանց խոտի»: Կամուրջների քանդվելու հետևանքով անանցանելի էին դարձել ճանապարհները և անհնար էր ապրանք փոխադրելը: Վատացել էին փոստային փոխանցումները: Պատճառների շարքում հիշատակվում էր անտառներից ծովափ կամ ծովափնյա գյուղեր գնացող կանոնավոր ճանապարհների բացակայությունը: Դրանով պայմանավորված՝ փայտը չէր բավարարում ժողովրդի կարիքները: «Աշխատանքը» վկայակոչում էր, որ կամուրջների և ճանապարհների շինարարության համար պետությունը Վանի վիլայեթին 1910 թ. հատկացրել էր 15.000 դուրուշ: Գումարը փոխանցվել էր տեղական գանձարանին: 9 ամիս անց պարզվել էր, որ կառուցվել էր ընդամենը հողե նավահանգիստ, որը մեկ տարի անց չէր ծառայելու իր նպատակին, քանզի ջուրն այն քանդելու էր շատ շուտով: Այդ ձեռնարկի վրա ծախսվել էր 1200 ոսկի: Ստացված բողոքները լուծելու համար կազմված վերաքննիչ մարմնի աշխատանքների վրա լրացուցիչ ծախսվել էր 768 ոսկի, որը, շաբաթաթերթի գնահատմամբ, «ջուր ձգւած ոսկի» էր, իսկ Թուրքիայի հանրօգուտ շինությունների հաստատության, ինչպես և կառավարական մյուս հաստատությունների գործունեությունը՝ հանցավոր և դատապարտման արժանի[20]:

---

[18] Նույն տեղում, էջ 4:

[19] Նույն տեղում, N 3, էջ 5:

[20] Նույն տեղում, էջ 6:

«Աշխատանքի» քննադատություններն անկողմնակալ էին: Վանի վիլայեթի մի շարք պաշտոնյաների կատարած լավ գործերը դրվատելով՝ գրում էր, որ նրանց բացասական գործերի մասին լռելը թշնամություն էր երկրի նկատմամբ: Թերթն անբարոյականություն էր համարում բոլորի կողմից իբրև հանցագործ ճանաչված մարդկանց պետական բարձր պաշտոններ շնորհելը: «Ներկայիս կառավարությունը դարձեալ ընդունում է ժողովրդին ինչպէս մի անկամ զէրոյի հաւասար զանգուածի... Ինչո՞ւ չէ. դափն էլ ձերն է, զուռնան էլ, չալէ՛ք ու խաղցէ՛ք: Աստված սիրէ՛ք, ո՞ւր են տանում մեր պաշտօնեաները. դէպի լեռնե՛ր»,- այս եզրահանգմանն էր գալիս շաբաթաթերթը[21]: Նա թուրքական կառավարությանը պարբերաբար կոչ էր անում ժողովրդին չհասցնել այն վիճակին, որ նա ոտքի կանգնի և պայքարի իր իրավունքների պաշտպանության համար: Հակառակ դեպքում թուրքական կառավարությունն ուժային կառույցներով պիտի ճնշեր նրան. «Իթթիհատականները ստիպուած են նրանց հետ խօսել թնդանօթների լեզուով»[22]: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար «Դրական պայման» խմբագրականում «Աշխատանքն» առաջարկում էր լուծել Թուրքիայի առջև ծառացած երեք առաջնահերթ հիմնախնդիրներ՝ հպատակների կյանքի, ունեցվածքի ապահովագրության, հողային, ճանապարհային և այլ կարգի հաղորդակցության հարցերը:

Ըստ շաբաթաթերթի, հողային հարցը մտահոգում էր ոչ միայն արևմտահայերին, այլև Թուրքիայում բնակվող բոլոր ազգերին: Այդուհանդերձ, «Աշխատանքը» համոզված էր, որ Թուրքիայում հողային հարցի լուծմանը առաջին հերթին սպասում էին հայ և քուրդ ժողովուրդները[23]: Բնորոշ է «Քրդերը» վերնագրով վերլուծականը, որտեղ այն միտքն է արտահայտված, որ ժողովուրդը ցանկանում էր ունենալ իր սեփական հողը և դրա վրա ստեղծած իր տնտեսությունը, հող, որպեսզի կարողանա իր աշխատանքի արդյունքը վայելել[24]: Պարբերականը կառավարությունից պահանջում էր հիմնովին և արդարության սկզբունքով վերջնականապես լուծել այս հարցը. «Պետութիւնը պարտաւոր է կանգնել Թուրքիայի ողջ գիւղացիութեան հոծ մեծամասնութեան հողային իրաւունքի պաշտպանութեան կողմը, վերջ տալու այդ դարաւոր անարդարութեանը, որը շարունակւում է եւ հիմա իր ամենալայն չափերով: Կառավարութիւնը պիտի դիմի արմատական միջոցների, արդարութեամբ վերջ տալու խընդրին: Հողային հարցը գոյութեան ու մահւան խնդիր է, լինել, թէ չը լինելու հարց»[25]: Իսկ «Հայ երկրագործին պահանջը» հոդվածում փաստվում էր, որ կառավարությունը 1908 թ. հուլիսի 10-ից հետո «ոչինչ ըրաւ» հողային հարցին բավարարում տալու առումով: Հայ

[21] Նույն տեղում, N 4, էջ 9:
[22] Նույն տեղում, 1911, N 7, էջ 15:
[23] Նույն տեղում, 1910, N 1, էջ 13:
[24] Նույն տեղում:
[25] Նույն տեղում:

գյուղացիության մեծամասնությունն իր պատմական բնօրրանում զուրկ էր հողից. «Նորա հողերը, իւր հայրենական կալուածները բռնապետական օրերից ի վեր յափշտակուած են: Հո՛ղ...այս է մեր արդար պահանջը, այս է մեր բողոքի ձայնը այսօր էլ, վաղն էլ, եւ քանի դեռ մեր իրաւունքները, մեր հողերը կը յափշտակուին, քանի մեր սոված երեխաները, արիւն արցունքոտ աչերով ձեռք կը պարզեն դէպի մեզ եւ «հա՛ց-հա՛ց» կը պոռան, մենք էլ կառավարութեան օձիքից պինդ բռնած պիտի պահանջենք մեր իրաւունքը - հո՛ղ- հո՛ղ: Տուէ՛ք մեզ մեր արդար իրաւունքներից մեր հողը, որով ապրինք և ապրեցնենք»[26]: Հետագա տարիների ընթացքում շաբաթաթերթը հողային հարցի հետ կապված մանրամասներ է տպագրել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում տիրող իրավիճակների մասին: 1913 թ. նույնիսկ կոչով դիմել է ընթերցողներին, որ նրանք տեղեկություններ ուղարկեն խմբագրություն՝ իրենց բնակավայրերում հողի հետ կապված խնդրահարույց իրավիճակների մասին: Թղթակցությունների հոսք է սկսվում: Դրանք հիմնականում զետեղվում էին «Հողային վեճ» կամ «Հողային հարց» խորագրերի ներքո: 1913 թ. նոյեմբերի 16-ին շաբաթաթերթը բացեիբաց հայտարարում էր, որ մշտապես տպագրել և շարունակելու է տպագրել արևմտահայերից կատարված հողային բռնագրավումների վերաբերյալ բազմաթիվ փաստեր, որոնք «ոչ կրնան հերքուիլ պաշտօնական կամ անպաշտօն հեռագիրներով և ոչ ալ աննպատակ յայտարարութիւններով»[27]:

«Աշխատանքը» «Կրթական գործը գավառներու մէջ» շարքում բարձրաձայնում էր նաև կրթամշակութային խնդիրների լուծման անհրաժեշտության մասին: Կրթական թեմաներով հոդվածներում անդրադառնում էր Վանի վիլայեթի գյուղական դպրոցների խնդիրներին և կրկին հանդես էր գալիս դրանց լուծման առաջարկներով: Այս շարքի պատասխանատուն Բարունակն էր: Շաբաթաթերթին հատկապես մտահոգում էր Վանի կենտրոնական վարժարանի ճակատագիրը, որը, չունենալով համայնքի ֆինանսական աջակցությունը, կանգնած էր փակվելու վտանգի առջև: Նա ընթերցողներին տեղեկացնում էր, որ հեղաշրջումից հետո Թուրքիայում հնարավորություններ ստեղծվեցին և հիմնվեցին հայկական դպրոցներ, գրադարան-ընթերցարաններ, նաև նշում էր, որ մասնավորապես Վասպուրականում գործում էին 120-130 հայկական դպրոցներ, իսկ «Մշոյ դաշտում և Սասունում Առաջնորդարանի և Դաշնակցական ընկերների ջանքերով բացել էին 78 վարժարան և նոյն բանն էր նկատուում նաեւ Կարինի, Տիարպէքիրի, Վանայ և այլ վիլայէթներում», բայց վանեցիները կարծես չէին կարևորում երկրորդական դպրոցի անհրաժեշտությունը[28]: Այս խնդրի առնչությամբ գրված բազմաթիվ հոդվածներում փաստերով հիմնավորվում էր երկրորդական վարժարանի անհրաժեշտությունը: «Կեդրոնականը պետք է ապրի» հոդվածում, օրինակ, հեղինակը՝ Ասպետը, հռետորական հարց է տալիս. «Ո՞րն է աւելի անհրաժեշտ Վանի համար. Կեդրոնական երկրորդական վարժարա՞ն մը, թէ՞ վարժապետանոց մը, որը

[26] Նույն տեղում, 1911, N 13, էջ 15-16:
[27] Նույն տեղում, 1913, N 3, էջ 1:
[28] Նույն տեղում, 1911, N 10, էջ 6:

պիտի պատրաստի ուսուցիչներ»[29]: Ինքն էլ փորձում է պատասխանել. «Վարժապետանոցէն առաջ և նոյնիսկ անոր գոյութիւնը արդիւնաւոր դարձնող, նախակրթարաններ եւ երկրորդական դպրոց մը անհրաժեշտ է»[30]: Շաբաթաթերթն այնքան էր կարևորում կրթական հարցի լուծումն արևմտահայության համար, որ գրում էր, թե այդ հարցը «պէտք է որոշէ Թիւրքիոյ բաղկացուցիչ մասերի դիրքը ընդհանուր Օսմանեան հայրենիքի մէջ: Ցաւալի է, որ Երիտասարդ թուրք կառավարութիւնը կամաց-կամաց լայնացնելով ազգային խորթութեան անջրպետը, աջ ու ձախ ազգային պոռթկումների և հրաբխային ցընցումների դուռն է բանում, եւ մասնավորապէս կրթական հարցի վերաբերմամբ»[31]: Ի վերջո, 1913 թ. դեկտեմբերի 14-ին «Աշխատանքն» առաջարկում էր հետևել եվրոպական այն զարգացած երկրների փորձին, որոնցում կային ազգային երկրորդական դպրոցներ, և ստեղծել երկու ընկերություն, որոնք գումար կներդնեին Վանի Սանդխտյան և Կենտրոնական վարժարանների կարիքները հոգալու համար: «Ժամանակն է, որ հաւաքական ձեռնարկներով ամրապընդենք հայ կրթութիւնը, ազգային դաստիարակութեան գործը: Ահա գործունէության ասպարէզ մը, ուր կրնան մեծ գործ կատարել հասարակութեան բոլոր խաւերը հաւասարապէս»[32]:

Կրթական հարցին նվիրված հոդվածներում մատնաշվում էին առկա թերությունները: Ասենք, օրինակ՝ Վանի վիլայեթի դպրոցներում կրթական գործը լիովին չէր վերահսկվում ուսումնական խորհրդի, թաղական մարմինների, հոգաբարձուների և խնամակալների կողմից: «Ուսումնական նոր շրջանը» հոդվածում առաջարկվում էր վերակազմել ազգային կրթական համակարգը և դպրոցների ուսումնական գործընթացը, որոնք միշտ «երեսէ ձգուած, անուշադիր մնացեր էին, եւ ատով տուժեր էր մեր դպրոցական սերունդը այս կամ այն հանգամանքով»[33]: Հայկական դպրոցների անմխիթար կացությունը բարվոքելու համար հոդվածագիրը պատասխանատու մարմիններին առաջարկում էր ուշադրություն դարձնել հետևյալ ուղղությունների վրա.

«1. Վանի և արուարձաններու հետ մէկտէղ ուշադրութեան առնել թեմական շրջաններու գավառական դպրոցներու խնդիրը,

2. մեր ներկայ ուսուցչութեան թուական եւ բարոյական որակը,

3. դպրոցներու ուսումնական ծրագրի հարցը,

4. դպրոցական պիւտճէ և հոգաբարձուներ,

5. ուսումնական ընդհանուր դասախօսությունները,

6. ուսումնարաններու առողջապահական վիճակը»[34]:

Ազգային դպրոցների բարեփոխման և բարենորոգման ծրագրերի քննարկումներից բացի՝ «Աշխատանքը» փորձում էր նպաստել աճող սերնդի

[29] Նույն տեղում, N 17, էջ 3:
[30] Նույն տեղում, էջ 5:
[31] Նույն տեղում, N 7, էջ 3:
[32] Նույն տեղում, 1913, N 7, էջ 1:
[33] Նույն տեղում, N 33, էջ 4:
[34] Նույն տեղում:

հոգևոր-մշակութային մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով իր էջերում տպագրում էր և՛ ճանաչողական ու գիտահանրամատչելի հոդվածներ, և՛ արվեստի ու գրականության տարբեր խնդիրների վերաբերյալ զրույցներ: Թերթը տպագրում էր ոչ միայն արևմտահայ և արևելահայ, այլև օտարազգի գրողների լավագույն ստեղծագործությունները: «Գրական ակնարկներ» շարքում ժամանակի գրողները բանավիճելու հնարավորություն ունեին մշակույթի ու գրականության զարգացման ուղիներին առնչվող հարցերի վերաբերյալ: Շարքի պատասխանատուն Օրիոնն էր: «Աշխատանքը» համոզված էր, որ աշխարհաքաղաքական հանգամանքների բերումով երկու հատվածի բաժանված հայ ժողովրդին միայն գրական-մշակութային վերածնունդը հնարավորություն կտար, որ արևելահայն ու արևմտահայն ապրեին նույն ձգտումներով: «Մենք հաւատում ենք, որ մի գեղեցիկ օր հեռու ապագայում նոր սկսած կեանքը, նոր գրական վերածնունդը մեզ պիտի միացնէ, խորտակելով և լեցնելով բոլոր բաժանող անջրպետները»,- գրում էր Օրիոնը[35]: Նա խոսում էր այն ցավոտ գրական երևույթի մասին, որ ի տարբերություն արևելահայ գրականության՝ արևմտահայ գրականությունը չէր արտացոլել արևմտահայ կյանքն իր բոլոր կողմերով: Արևմտահայ գրականությունն իրականում պոլսահայ գրականությունն էր. «Մեր գաւառը՝ Կարին, Մուշ, Պիթլիզ, Վասպուրական, Տիգրանակերտ, Խարբերդ, աւա՜ղ, չեն ունեցել իսկական մտքով, գրական, մտաւորական կեանք: Եւ Պոլսի ստեղծածը չի ժողովրդականացել, խորունկ արմատ չի ձգել: Սա փաստ է, կենդանի իրողութիւն»[36]: Հոդվածագիրը, սակայն, ծայրահեղության էր հասնում, երբ գրում էր, թե Կ. Պոլսում ստեղծված գրական ստեղծագործությունները չեն արտացոլել ժողովրդի կյանքը, նրա իղձերն ու ձգտումները, թե դրանք կտրված են մայր գրականության ակունքներից: Արևմտահայ գրականության զարգացումը շաբաթաթերթը տեսնում էր գավառի հետ կապերը սերտացնելու և այն արտացոլելու մեջ. «Ահա նորագոյն գրականութեան կեանք տուող մեծ կեդրոնը, որի շարժումը արձանագրելը պիտի լինի մեր գրական կեանքի իսկական նպատակը: Ահա թէ նա իր կենսունակութիւնը որտեղից պիտի ստանայ»[37]:

«Աշխատանքը» կարծում էր, որ արևմտահայությանը մտահոգող հողային, կրթական և այլ կարգի հիմնահարցերը լուծելու համար հարկավոր էր ուժեղացնել հայ համայնքը, ամրապնդել գավառի և Կ. Պոլսի կապերը, համախմբել արևմտահայ սերուցքը և համատեղ ուժերով փորձել Թուրքիայում իրենց ընձեռված հնարավորությունների սահմաններում փորձել, նախ՝ փնտրել, գտնել դրանց հասնելու միջոցները, ապա՝ աշխատել գործնական լուծում տալ դրանց: Հաս-կանալով, որ այդ ամենը գուցե և անհնար է այն օրերի աշխարհաքաղաքական

[35] Նույն տեղում, 1910, N 2, էջ 14:
[36] Նույն տեղում, էջ 9:
[37] Նույն տեղում, էջ 15:

հանգամանքներում՝ թերթը, այդուամենայնիվ, իր հրապարակումներում անընդմեջ անդրադառնում էր հիշյալ խնդիրներին: «Աշխատանքն» իրատես էր և իրեն անվանում էր իրենց անուններով՝ ի տարբերություն Թուրքիայում այդ շրջանում հրատարակվող մի շարք այլ պարբերականների: «Բաժանիր, որ տիրես» քաղաքականության հետևանքով Թուրքիայում վաղուց ի վեր խրզվել էին կապերը արևմտահայ վիլայեթների (գավառի) և մայրաքաղաք Կ. Պոլսում կենտրոնացած մտավոր ներուժի միջև: Այս հարցերին էր նվիրված «Պոլսահայ կյանք» վերլուծական հոդվածաշարը: «Պոլիս գոյութիւն չունէր գաւառներու հայութեան համար, նա խորթացած մէկ հատուած միայն կը նկատուէր, որ ի վիճակի չէր միանալու, նոյնանալու հայկական տանջանքներուն հետ: Բայց պայմանները այժմ փոխուած են, գաւառացի հայը անհրաժեշտաբար պէտք է որ հետաքրքրուի Պոլսահայերու գործերովն, որովհետև ասոնք կապ ունեն իր ազգային կեանքին հետ: Պոլիս իբրեւ ազգային գործերու կեդրոն, իր ձեռք առած է նաեւ ղեկը ազգային բոլոր գործերուն, որոշումներ, կարգադրութիւններ կընէ, առանց նկատի ունենալու գաւառի իրականութիւնը, անոր բազմաթիւ կարիքները: Հետեւաբար անմտութիւն կը լինէր գաւառացի հայութեան կողմէն ցոյց տրուելիք նախկին անտարբերութիւնը, որ ներկայիս իր գոյութեան իրաւունքէն զրկուած է»,- գրում էր հոդվածագիրը՝ Ասաֆը[38]: Նրա կարծիքով՝ պոլսահայ մտավորականները կամ «ազգային ջոջերը» իրականում շահագրգիռ էին ոչ թե ազգային խնդիրների լուծմամբ, այլ՝ «անձնական շահերու ցանցով մը պատուած» հարցերի շահարկմամբ[39]: Այդպիսի ազգասերը թույլ չէր տալիս ազգի հասցեին որևէ վիրավորական բառ ասել, բայց գավառացու անունը լսել չէր ուզում. «Երբ աշխատաւոր գիւղացիութեան, գաւառի հայութեան թշուառութեան մասին կուզես խօսել, նա քայլերը կ՚արագացնէ, երբ հարիւրաւոր որբերու վիճակը կը նկարագրես, «ազգը սաղ մնայ» կըսէ ու խօսքը կը փոխէ: Բայց եթէ հարցնես՝ ո՞վ է ազգը, նա պիտի պապանձէր կամ շատ-շատ «ազգ»-ին քով պիտի կցէր «հայ» բառն ալ, զոր երբեմն կը մոռնայ: Թերեւս ոչ մէկ տեղ «ազգ» բառը այնքան չէ յեղյեղուած ու այլանդակուած, որքան Վոսփորեան այս ափերուն վրայ, և կը շարունակի այդ բառի շահագործումը՝ «ի սէր» մըն ալ առջեւ աւելցնելով իբրեւ անբաժան նախդիր»,- այսպիսի հեգնանքով էր արտահայտվում պոլսահայ մտավորականության ու ազգային գործիչների մասին «Աշխատանքը»[40] և նույնիսկ ազգային ուժերի պառակտման մեջ էր մեղադրում պոլսահայ մտավորականներին. «Պոլիսը խորթ, դաւաճան մայրն է հայութեան: Նա չի ծառայում իւր զաւակներին և մեր ազգային կեանքի առաջացման ճանապարհի վրայ ընկել է որպէս խանգարիչ հսկայ քար»[41]:

Ազգային կառույցների ու գործիչների հասցեին «Աշխատանքի» էջերում հնչող մեղադրանքներն անհիմն չէին, թեև հաճախ ունեին անհարկի խստություն և պահանջկոտություն: Շաբաթաթերթը չէր կարողանում առանց արգատահանքի և

---

[38] *Նույն տեղում, 1911, N 2, էջ 8:*

[39] *Նույն տեղում, էջ 10:*

[40] *Նույն տեղում, էջ 11:*

[41] *Նույն տեղում, էջ 6:*

զայրույթի խոսել հայկական գավառների ազգային հաստատությունների մասին՝ սկսած երեսփոխանական ժողովից, Առաջնորդարանից և վերջացրած հոգաբարձություններով ու թաղականություններով[42]: Դրանք աչքի էին ընկնում իրենց անբարեխիղճ և անկանոն գործելակերպով: Օրինակ՝ Վանի քաղաքական ժողովն ու թաղականություններն արժանանում էին պարսավանքի նաև այն պատճառով, որ վերածվում էին թուրքական իշխանությունների ձեռքին նայող մուրացկանների, այնինչ «Հավիտենական մուրացկանները» հոդվածի հեղինակ Ա. Մարմարյանի կարծիքով՝ հայոց ազգային հաստատությունները ղեկավարող մարմինները ոչ թե պիտի ենթարկվեին կենտրոնական իշխանությունների պահանջներին, այլ պաշտպանեին արևմտահայության շահերն ու վարեին ազգային քաղաքականություն[43]:

Իր ամենշաբաթյա թողարկումներում թերթը լուսաբանում էր թե՛ օսմանյան խորհրդարանի (Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթից կատարված արտատպումների միջոցով), թե՛ Վանի Ազգային կենտրոնական ժողովի, թե՛ ազգային կյանքը կառավարող մնացած կառույցների աշխատանքները: 1913 թ. 29-րդ համարից (հունիսի մեկից) սկսած՝ խմբագրականները զուգահեռաբար տպագրում էր թուրքերենով՝ թուրք ընթերցողների համար: Բացվում են նաև նոր խորագրեր՝ «Հողագրավումներ», «Գավառի և Վանի կյանքը», «Եվրոպա և Հայկական հարցը», «Վիճակագրական», «Երեսփոխանական ժողով» և այլն: Ուշագրավ և հետաքրքիր են Ազգային կենտրոնական ժողովի աշխատանքների վերլուծությունները, որոնք ոչ միայն պատկերացում էին տալիս 1910-1915 թթ. Վանի վիլայեթի ազգային ներքին խնդիրների մասին, այլև ընթերցողներին հնարավորություն էին ընձեռում ծանոթանալ «Աշխատանքի» տեսակետներին ու առաջարկներին: Ըստ այդմ՝ 1913-1914 թթ. Վանի Ազգային կենտրոնական ժողովում քննարկվող հասարակական ամենամեծ հնչողություն ունեցող հարցը ժողովրդի արտագաղթն էր: «Արտագաղթը» վերնագրով հոդվածաշարի հեղինակ Իշխան Միքայելյանը ներկայացնում էր արտագաղթի հիմնական պատճառները. աշխատանքի բացակայությունը, քաղաքական անորոշ կացությունը և անապահովությունը, հաղորդակցական միջոցների պակասը, առաջացած տնտեսական տագնապը: Ի. Միքայելյանը գրում էր, որ արևմտահայության մեջ 100-ից 70-ն ապրում էր գյուղերում՝ զբաղվելով երկրագործությամբ, իսկ քաղաքներում կենտրոնացած մնացած մասն իր օրվա հացը վաստակում էր առևտրի և արհեստների միջոցով: Երկրագործությունը շատ դժվարությամբ էր ապահովում բնակչության կարիքները. «Հայ գիւղացիութեան արդիւնաբերութեան սպառումը տեղական է: Նա ոչ միայն հնարաւորութիւն չունի արտածելու օտար երկիրներ, այլեւ՝ մի նահանգէն միւսը: Մշո դաշտ, Պուլանըդ, Արճեշ և Ալջավազը եթէ ունենային արտածման հնարաւորութիւն, գուցէ անոր ներկայ արդիւնաբերութիւն իւր քանակով մէկէն ութ անգամով աւելնար»[44]: Ճանապարհների բացակայությունը կամ դժվարանցանելիությունը, թալանի վտանգը հայ գյուղացուն խանգարում էին իրացնել իր աշխատանքի արդյունքները

[42] Նույն տեղում, 1911, N 9, էջ 8:
[43] Նույն տեղում, N 3, էջ 13:
[44] Նույն տեղում, 1913, N 36, էջ 13:

(յուղ, պանիր, բուրդ և այլն), իսկ բարձր լեռնային շրջաններում ապրողներն զբաղվում էին նահապետական աստիճանի վրա գտնվող տնայնագործությամբ: Սոցիալական վատ վիճակում էին նաև առևտրով կամ արհեստնե-րով զբաղվող արևմտահայերը: Ի. Միքայելյանը կոնկրետացնում էր խոսքը. «Վան վիլայէթը, որու բնակչութեան թիվը չի հասնէր 400.000-ի, Կեդրոնով եւ գաւառակներով միասին ունի 3500-4000 առևտրական խանութներ, որոնցմէ մեծ մասը կամ ողորմելի եւ արհամարհելի դրամագլուխ ունին, կամ անվստահութեամբ է, որ գործ կը դարձնեն»[45]: Արտաքին քաղաքական հանգամանքներն ստիպում էին, որ այդ խանութները կամ փակվեին, կամ վնասով աշխատեին: Իրենց արտադրանքի իրացման համար լայն շուկա չունեին նաև արհեստավորները: Առաջանում էր լրացուցիչ աշխատանք փնտրելու պահանջ՝ կարիքների բավարարման նպատակով: Թուրքիան, սակայն, «չի մատակարարէր անոր աշխատանք, ու հայ գիւղացին կը բռնէ Կովկասի եւ Ամերիկայի ճանապարհը»[46]: Երկիրը հիմնականում լքում էին երիտասարդները: Միակ մխիթարական հանգամանքն այն էր, որ «հայերու՝ օտար երկիր մեկնիլը, գոնէ Վասպուրականի մէջ, ո՛չ թէ գաղթի, այլ զուտ պանդխտութեան բնոյթ ունի»[47]:

«Աշխատանքն» ազգային մարմիններից պահանջում էր լիարժեք գործունեություն, թեև հասկանում էր, որ Թուրքիայում ամեն քայլափոխի արգելքներ էին դրվելու՝ այդ աշխատանքը խափանելու համար: «Այսօր հայ ժողովուրդը միաբերան ամեն տեղից, ամեն վայրից իւր ցաւերի, իւր հսկայ տանջանքի մասին է բարբառում, իսկ այդ ազգային կոչւող մարմինները... Ի՞նչ են անում նրանք: Ոչինչ և ոչինչ: Զգուշացէ՛ք, մեծ պիտի լինի գաւառի ժողովրդի ցասումը, ինչպէս մեծ է նրա համբերողութիւնը և տանջանքը»[48]: Օտարները չէին օգնելու հայ ժողովրդին. «Հայութեան տանջանքը և շահերը ծնուել ու ծառացել են գաւառում, և նրա դարմանումը պիտի սկսի ինքը գաւառը»[49]: Իսկ դրա համար անհրաժեշտ էր «ազգային ընդհանուր շահերի և ընդհանուր խնդիրների վերաբերմամբ համերաշխութեամբ ու միասնութեամբ գործ կատարել: Լաւ է ուշ, քան երբէք»,- եզրակացնում էր «Աշխատանքը»[50]:

Արդեն 1913 թ. վերջերին և 1914 թ, սկզբներին, գիտակցելով հանդերձ, որ եվրոպական դիվանագիտությունն իր շահն էր հետապնդում, պարբերականը գրում էր, որ ամեն դեպքում պիտի շարունակվեր պայքարը՝ հայկական նահանգների բարենորոգման ծրագրի իրականացման համար[51], իսկ հայ

[45] Նույն տեղում, N 38, էջ 3:
[46] Նույն տեղում, N 36, էջ 4:
[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում, 1910, N 5, էջ 5:
[49] Նույն տեղում, 1911, N 2, էջ 6:
[50] Նույն տեղում:
[51] Նույն տեղում:

ժողովուրդն անցյալի դառն ու արյունոտ փորձերից հետո իրավունք ուներ չհավատալու թուրքական իշխանությունների անկեղծությանը. «Չեղաւ օր մը պատմութեան մէջ, որ թուրք կառավարութիւնը խօստանար ու կատարեր, չեղաւ օր մը, որ անոր խօսքին անմիջապէս յաջորդէր գործը»[52]: Ցավալի փաստ է այն, որ 1915 թ. փետրվարին Վանի երեսփոխան Օննիկ Դերձակյանը (Արշակ Վռամյան) Թուրքիայի ներքին գործերի նախարարություն ուղարկած նամակում դեռևս չէր կորցրել հույսը, թե հնարավոր էր համերաշխություն հաստատել և վստահության ոգի ներարկել հայ ժողովրդի մեջ իր կյանքի ապահովության համար: Նա այդ նամակում գրում էր. «Ոչ մէկ կողմը բան մը կրնայ շահիլ, եթէ ծածկուի սա իրողութիւնը, թէ հայ զինուորներու զինաթափումը, հայ անզէններու ստրուկի նման աշխատացուիլը, տեղական իշխանութեանց անհարկի խստութիւնները եւ տեղի ունեցած ջարդերն ու թալանները ակամայ կուգան նորոգել յուշերը 1895-1896-ի համիտեան սև օրերուն: Ատանայի ջարդը, հողային և այլ կարգ մը խնդիրներու առկախ մնալը այն կասկածը ներշնչեցին հայերու մէջ, թէ դժոխային նպատակ մը կը սնուցուի հայ ժողովուրդի բուն իսկ գոյութեանը դէմ»[53]:

1915 թ. ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը թուրքերը ծուղակ են լարում ու թիկունքից դավադրաբար հարձակվելով՝ անհավասար կռվում սպանում են թուրքերի խնդրանքով ապստամբած այգեստանցիների հետ հաշտության բանակցությունների գնացած Իշխան Միքայելյանին, նրա 3 ընկերներին: Վերջինիս նահատակությունից հետո «Աշխատանքի» խմբագիր - հրատարակիչն է դառնում ՀՅԴ հայտնի գործիչ Հմայակ Մանուկյանը, իսկ շաբաթաթերթը հրատարակվում է արդեն շաբաթը երկու անգամ՝ չորեքշաբթի և շաբաթ օրերին: Հմայակ Մանուկյանի խմբագրությամբ լույս տեսած «Աշխատանքը» հիմնականում անդրադառնում էր եղեռնին՝ նորաբաց «Կացությունը գավառների մէջ» խորագրի ներքո: Բնորոշ է, որ թերթը, օրագրային հրապարակումների ձևով ներկայացնելով Վանի 30-օրյա ինքնապաշտպանությունը, կարծես ձգտում էր ազատագրական պայքարի ոգի ներարկել ընթերցողների մեջ, որոնց շրջանակն արդեն սահմանափակվում էր միայն Վան քաղաքով: «Աշխատանքը» վրեժի էր կոչում ամենքին. «Այսօր Հայաստանն է արիւնաներկ, որ ՎՐԷԺ կը գոռայ: Այսօր հայկական արիւնազանգ բարձրավանդակի վրայ սրախողխող հազարաւոր հայ դիակներ, յօշոտուած մարմիններ, բռնաբարուած կիներ, պղծուած աղջիկներ ՎՐԷԺ կը պօռան: Կը լսէ՞ք, վասպուրականցիներ, կը լսէ՞ք»[54]: Կոչ էր անում նաև համախմբվել ինքնապաշտպանական մարմնի, կամ, իրենց խոսքերով ասած, Վանի կառավարության շուրջ՝ քաղաքը վերականգնելու, թուրքերի հարձակումներին դիմադրելու և շրջակա գյուղերի ու քաղաքների հայ ազգաբնակչությանը ջարդերից

[52] Նույն տեղում:
[53] Նույն տեղում, 1915, N 23, էջ 2:
[54] Նույն տեղում, N 22, էջ 1:

փրկելու համար: Սակայն թե՛ «Աշխատանքի» խմբագրակազմի, թե՛ Վանի ինքնապաշտպանության մարտիկների ազգափրկիչ ջանքերը չիրականացան: Այնուամենայնիվ, հայ ժողովուրդը կարողացավ ոտքի կանգնել, վերակետել իր պետականությունը և շարունակել պայքարը հանուն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, և Թուրքիան ի վերջո պիտի փոխհատուցի մեր ժողովրդի կրած նյութական ու հոգևոր կորուստները:

ЕЖЕНЕДЕЛЬНАЯ ГАЗЕТА “АШХАТАНК”,
ИЗДАВАВШАЯСЯ В Г. ВАН (1910-1915 ГГ.)

ОВСЕПЯН М. В.

Резюме

Еженедельная газета “Ашхатанк” являлась местным органом периодической печати АРФ-Дашнакцутюн, проводником ее идей. Газета освещала жизнь и проблемы Ванского вилайета и играла консолидирующую роль в судьбе армянской нации.

С течением времени “Ашхатанк” стал рупором общенациональных проблем. В период героической самообороны Вана газета живо откликалась на те или иные проблемы внутренней жизни ванцев, в числе которых особое место занимали вопросы самоуправления Вана.